ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.01.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 127/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-127/16 բողոք) և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-127/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 13.01.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1.<u>«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 29.12.2016թ. բողոքով հայտնել է, որ Ընկերությունը հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության

(այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տավարի մսի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) թվով 7 չափաբաժինների մասով:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել 4 ընկերություններ՝ «Էրիզ», «Երևանի սննդի կոմբինատ», «Միտք-Կ» և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2016թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ տարբեր չափաբաժիններով 1-ին տեղ էին գրավել «Էրիզ», «Երևանի սննդի կոմբինատ», «Միտք-Կ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 23.12.2016թ.:

Մասնակիցներից միայն «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն է առաջարկել ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանք:

Ընկերությունը վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետը «բ» պարբերությունը, որի համաձայն՝ եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է՝ ըստ չափաբաժինների:

Տվյալ դեպքում 1-6-րդ չափաբաժինների համար Ընկերության կողմից առաջարկած գինը կազմել է 60 606 000 (վաթսուն միլիոն վեց հարյուր վեց հազար) ՀՀ դրամ: Ընթացակարգի 7-րդ չափաբաժի համար Ընկերության կողմից

առաջարկված գինը կազմել է 59 831 226 (հիսունինը միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:

Ըստ Ընկերության՝ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կիրառվեր Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը, ինչն օրենքի պարտադիր պահանջ է, ապա Ընկերությունը պետք է հաղթող ճանաչվեր բոլոր յոթ չափաբաժինների մասով:

Ընկերությունը հայտնել է, որ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաշվարկվեր «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի ունեցած 15 տոկոսի առավելությունը, ապա կստացվեր հետևյալ պատկերը.

Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժիններով մասնակիցները կարող էին հաղթող ճանաչվել, եթե վերջիններիս առաջարկած գինը լիներ 51 515 100 ՀՀ դրամից պակաս, սակայն հաղթող ճանաչված որևէ մասնակցի գնային առաջարկ 58 349 000 ՀՀ դրամից պակաս չի եղել:

Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով մասնակիցները կարող էին հաղթող ճանաչվել, եթե վերջիններիս առաջարկած գինը լիներ 50 856 542 ՀՀ դամից պակաս, սակայն հաղթող ճանաչված որևէ մասնակցի գնային առաջարկ 54 571 338 ՀՀ դրամից պակաս չի եղել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության մեջ նշվել է, որ միայն «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն է առաջարկել ԵՏՄ անդամ երկրների ապրանք, սակայն ԵՏՄ անդամ երկրների արադրության ապրանք ներկայացնելու համար սահմանված արտոնությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կիրառվել:

Ընկերության համար անհասկանալի է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկի նկատմամբ 15 տոկոսի առավելությունը չկիրառելու հանգամանքը, այն դեպքում երբ առկա չէ կանոնի կիրառման բացառություն:

Ընկերությունը վկայակոչել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ իրավական ակտի նորմերը, բացառությամբ նույն հոդվածի չորրորդ մասում նախատեսված դեպքերի, գործում են ուղղակիորեն և

ենթակա են կատարման՝ անկախ այն հանգամանքից, թե դրանց հիման վրա կամ ի կատարումն դրանց ընդունվել են իրավական այլ ակտեր, թե ոչ:

Նույն օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած իրավական ակտերի պահանջները...:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալ նորմերի չկիրառման արդյունքում Ընկերությունը ոչ իրավաչափ կերպով զրկվել է իր օրինական ակնկալիքից, ինչի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել խախտված իրավունքի վերականգնման համար դիմել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով, Կարգի 68-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի հանձնաժողովի 29.11.2016թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Էրիզ», «Երևանի սննդի կոմբինատ», «Միտք-Կ» ՍՊ ընկերություններին հաղթող ճանաչելու մասին որոշումները և բոլոր յոթ չափաբաժիններով հաղթող ճանաչել «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-127/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.01.2017թ. ժամը 16:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.01.2017թ. թիվ ԴՎԱ/24 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման

վրա, մինչև համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելը (պայմանով), ինչի վերաբերյալ թույլտվությունը ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.11.2016թ. թիվ 01/73-3/24654-16 գրությամբ և Ընթացակարգի շրջանակներում գնման ենթակա ապրանքների մասով առավելագույն գին չի սահմանվել, հետևաբար Ընթացակարգի շրջանակներում չի կարող կիրառվել Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթը և այն չի նախատեսվել նաև Ընթացակարգի հրավերով:

Պատվիրատուն նշել է, որ առկա է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 գրությամբ տրված պարզաբանումը, որի համաձայն՝ Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը կիրառելի չէ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-127/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.01.2017թ. ժամը 16:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, հետևաբար հնարավոր չէ որոշել գնման առարկայի առավելագույն գինը: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ նման պայմաններում հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված 15 տոկոսի առավելությունը, որպիսի դիրքորոշումը հաստատվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 գրությամբ տրված պարզաբանմամբ:

3. <u>ԳԲԽ-127/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 13.01.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-127/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-127/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տավարի մսի ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, այն է՝ մինչև ֆինանսնական միջոցներ նախատեսվելը, կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով չի նախատեսվել այն դրույթը, համաձայն որի գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող Մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն, եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տավարի մսի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

4. Ընկերությունը իր կողմից ներկայացված հայտի թիվ 4.2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժինների առաջարվող ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

5. «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների մասով, որոնցից 1-6-րդ

չափաբաժիններից յուրաքանչյուրի մասով կազմել է 50 505 000 (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ, իսկ 7-րդ չափաբաժնի մասով՝ 49 859 356 (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1-րդ կետով Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի մասով կազմել է 48 951 000 ՀՀ դրամ, Ընթացակարգի 3-5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էրիզ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը հիշյալ չափաբաժիններից յուրաքանչյուրի մասով կազմել է 48 624 288 ՀՀ դրամ, Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Միտք-Կ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմել է 45 476 116 ՀՀ դրամ:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 գրությամբ ներկայացված պարզաբանմամբ հայտնել է, որ ***Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը կիրառելի չէ Օրենքի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում:***

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը ԳԲԽ-20/16 բողոքի քննության շրջանակներում 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությամբ բողոքով պատվիրատու «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ին պարզաբանել է, ***Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում առկա չէ գնման առարկայի նախահաշվային, հետևաբար նաև գնման հայտով նախատեսված առավելագույն գին:***

5.<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի 29.11.2016թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.01.2017թ. թիվ ԴՎԱ/24 գրությունը և կից

փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 և 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությունները հայտնում է հետևյալը.

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և ***առավելագույն գնի արտադրյալը*** չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը սահմանում է, որ բացառությամբ նույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան

հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տավարի մսի ձեռքբերման նպատակով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգը, համաձայն Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի, կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տավարի մսի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4.2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժինների առաջարկվող ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

Ինչպես արդեն նշվել է Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը սահմանում է, որ եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի ***և <u>առավելագույն գնի</u> արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը,*** ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

Հետևաբար այն դեպքում, երբ մասնակիցը հայտով առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրի արտադրության ապրանք, ապա գնային առաջարկների համեմատման ընթացքում պատվիրատուն պարտավոր է վերջինիս նկատմամբ կիրառել Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի

«բ» պարբերությամբ նախատեսված՝ մինչև 15 տոկոս գնային առավելությունը, եթե գնման հայտով ներկայացված տվյալ ***գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը:***

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարությունը ԳԲԽ-20/16 բողոքի քննության շրջանակներում 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությամբ բողոքով պատվիրատու «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ին պարզաբանել է, որ ***Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում <u>առկա չէ գնման առարկայի նախահաշվային</u>, հետևաբար նաև գնման հայտով նախատեսված <u>առավելագույն գին:</u>***

ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ***<u>Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը կիրառելի չէ Օրենքի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում:</u>***

Այսպիսով՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով գնումը կատարվում է մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, ուստի գնման հայտով չի սահմանվում գնման առարկայի առավելագույն գինը, հետևաբար, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 և 08.09.2016թ. թիվ 1/73-1/21695-16 գրությունների, հնարավոր չէ կիրառել նաև Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկելու դեպքում 15 տոկոս գնային առավելությունը, քանի որ հնարավոր չէ որոշել գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ չկիրառելով Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված 15 տոկոս գնային առավելությունը, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Բաղալյան Սյունե**

Հովհաննիսյան Ռուզաննա